

տիկ արդիւնք կ'արտադրէ Ամերիկայի բաւարարական ու քաղաքական շրջանակներուն մէջ ի նպաստ Հայերու:

ԿՈՉՆԱԿԻ Յունիս 17 համարին մէջ կը կարդալուք:

« Ամերիկեան Հայաստաստ Յանձնախումբին քարտուղարը՝ Հայ կարօտեալներու ի նպաստ համեստ գումար մը նուէր ընդունենցաւ քանի մը օր առաջ Ամերիկացի անձնութեան քարեկամէ մը: Յիշեալ Ամերիկացին՝ որ իր անունը կ'ուզէ ծածուկ պահել՝ Հայաստանի կարօտեալներու տառապեալ վիճակին վրայ յօժ և կարգացած ըլլալով... կ'երթայ Յանձնախումբին գրասենեակը, և Հայոց մասին հարցուփորձ ընելէ ետքը՝ կը յայտարարէ իր փափաքը, թէ կ'ուզէ 5000 տոլարի դուամբ մը նուիրել այդ նպատակին համար... Մարդը ազդուելով տրուած տեղէ կուծիւններէն, կը նստի ու 18,000 տոլարի չէք մը գրելով կը յանձնէ քարտուղարին»....

Այս բարերար Ամերիկացին The New Armenia-ի միջոցաւ էր որ Հայերով հետաքրքրուեցաւ:

Կը հաշուուի, թէ 100,000 Հայեր կան Ամերիկայի մէջ: Անոնցմէ գէթ 10,000ը նիւթական կարողութիւն և մտաւորական հասկացողութիւն ունին բաժանորդագրուելու The New Armenia-ին կամ զայն նուէր զրկելու օտար կորուստ անձանց ու կազմակերպութիւններու:

Արդ քանի՞ Հայեր կը կարծէք թէ բաժանորդագրուած են The New Armenia-ի, կամ նուէր զրկած զայն. 800, միայն 800: Զանցառելի թիւ մը, այնպէս չէ՞:

Այն Գերմանները զորս մենք շարունակ կ'արհամարհենք, ներկայ աշխարհաւոր պատերազմէն ի վեր երկրտաանեակ մը Անգլիերէն թերթեր հիմնեցին Ամերիկայի մէջ Գերմանիոյ դատը պաշտպանելու նպատակով: Այս միայն այսչափ, այլ ամեն մէկ Գերմա-

նացի կարծես գործակալ մը դարձաւ զանոնք ծաւալելու:

Զանգուածեղ Գերմաններ, 40-50 տարեկան հասակի մէջ, այդ թերթերը կը ծախեն երկաթուղիի կայարաններու դուռը կամ քաղաքներու նշանաւոր պողոտաներու անկիւնը:

Գերմանները արհամարհելի են, անտարուկոյս, բայց ինչպէս կ'ըլլայ որ անոնք իրենց ազգային շահերը պաշտպանելու տեսակետով զմեզ կը գերազանցեն:

Կը պատմուի, թէ ծովակալ մը 25 տէնթով կը վարձատրէ նաւազ մը, որ իր պատին ու կեանքը փրկած էր: Երբ նաւազը սաստիկ կը զայրանայ ու կը վրդովուի, անոր ընկիւնները կ'ըսեն.

« Մի՛ զայրանար, ծովակալը քենէ աւելի ազէ՛կ գիտէ իր պատիւին ու կեանքին գինը»:

Միեւնոյն հեղեարանութեան նշաւակ պիտի չըլլան Ամերիկահայերը եթէ շարունակեն իրենց դատաւարտելի ժառութիւնը հանդէպ The New Armenia-ի:

Թերես այս տողերը կարգաւոր յուշուիս ու բազմապնդու.

« Աւա՛ղ, մեր ազգը ունէ օգտակար՝ ձեռնարկ չի քաջալուրեր»:

Բայց ո՛վ է Մեր Ազգը՞:

Եթէ մենէ իւրաքանչիւրը գնահատէ օգտակար ձեռնարկ մը, այն ատեն «մեր ազգ»ը, որ քեզի ու ինծի նման անհատներէ կը բաղկանայ, կատարած կ'ըլլայ իր պարտականութիւնը:

Ուստի փոխանակ «մեր ազգ»ը մեղադրելու, անվիտպէս նուէրդ կամ բաժնեգինդ զրկէ The New Armenia-ի:

The New Armenia-ի տարեկան բաժնեգինն է \$1. 2,00 Ամերիկայի մէջ, \$1. 2,50՝ արտասահմանի:

THE NEW ARMENIA

949 Broadway,

U.S.A. NEW YORK, N. Y.

1917ի ԲԱԶՄԱՎԷՊԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Գերյ. Տ. Կ. Դիրուկեան, Աղբուր
Արթ Տ. Ս. Քահ. Սարգսեան, Տաքքա
Մեծ. Պ. Մ. Կիւրեղեան, Գահիրէ
Մեծ. Պ. Յ. Ղազիկեան, Աղբուր
Մեծ. Տօթ. Լ. Շաքարձումեան, Բարիդ
Մեծ. Պ. Յ. Ուլուհանեան, Մարտի
Մեծ. Պ. Մ. Թիմոնեան, Ռուսով. Տոմ

Մեծ. Պ. Տ. Կիւրեղեան, Էքզիկիստաթ
Մեծ. Պ. Յ. Պէրպէրեան, Պոսթոն
Մեծ. Պ. Մանուկեան, Տիրուր
Մեծ. Յ. Ղ. Մարթէն, Ռուսթ Միւս
Մեծ. Ե. Գ. Զէրչուրի, Բեդիքսոն
Մեծ. Հ. Գ. Ղազարոսեան, Միլան
Մեծ. Մ. Գորոքեան, Ս. Բոյոյ